ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԴԵՊԻ ՀԱՎԵՍԻՆ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՅԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

(Պայմանագիր N 262՝ կնքված 2019 թ. հունիսի 14-ին)



28.02.2020., Երևան

Հաշվետվության ներկայացման մեթոդաբանությունը

ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհով «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի իրականացրած «Դեպի Հավեսին սենյակների ցանց» ծրագրի հաշվետվությունը գրելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

- ելնելով աշխատանքի ընթացքում առաջին հերթին մշտապես աշխատելու առանձնահատկությունից՝ կից խտասկավառակով ներկայացնում ենք նաև թվային հաշվետվությունը և առաջարկում ենք ընթերցել **հենց այդ** տարբերակը,
- հաշվետվությունը կառուցել ենք ՀՀ տարբեր մարզերում հիմնադրամի ստեղծած կրթամշակութային հարթակներ՝ Հավեսին սենյակներ կատարած այցերի վերաբերյալ
  ա) ֆեյսբուքյան իվենթների,
  բ) այցերի ընթացքը ներկայացնող ալբոմների (տեքստեր, լուսանկարներ, տեսանյութեր) քրոնոլոգիայով. յուրաքանչյուր ազդը և ալբոմը կազմելիս հավուր պատշաճի նշել ենք ծրագիրը ՀՀ ԿԳՄՍ նախարարության օժանդակությամբ իրականացնելու հանգամանքը,
- թեև ալբոմները կազմված են այնպես, որ հանրամատչելի և ընթերցահաճո եղանակով ներկայացնեն ծրագրի փիլիսոփայության հանգուցային դրույթները (կրթամշակութային խնդիրների արծարծում, ուրբանիզացված մշակույթի արտահանում, ներառականություն, գործընկերություն, կորպորատիվ պատասխանատվություն, մշակույթի ապակենտրոնացում և այլն), այդուհանդերձ, հարկ ենք համարել ալբոմների հղումները տալուց բացի՝ որոշ էական մեկնաբանություններ ևս ավելացնել՝ շեշտադրելով յուրաքանչյուր այցի արժանահիշատակ պահերը,
- այցերը պլանավորելիս նպատակադրվել ենք դրանց արդյունավետությունը հասցնել առավելագույնի՝ հաճախ երկբաղադրիչ, երբեմն նույնիսկ՝ եռաբաղադրիչ դաս-հանդիպումներ կազմակերպելով (գեղանկար / քանդակ/ անիմացիա / գրաֆիտի / թատրոն / ասմունք և այլ զուգորդումների տարբերակներով),
- ներկայացվող նյութերն արտացոլում են նաև ծրագրի տեխնիկական կողմը՝ ցանցի սահմաններն ընդարձակելու նպատակով Երևանի տարբեր դպրոցներում «Հայ Ձմեռ պապի» ծրագիրը ներկայացնելու դրվագները, արդեն ցանցի մասնակից դարձած կրթօջախների սաների տեղափոխումը մարզեր, երեխաների սննդի կազմակերպումը և այլն,
- այցերի օրերը համապատասխանեցվել են ծրագրի մասնակից կողմերի նախընտրություններին և հնարավորություններին, ուստի ԿԳՄՍ նախարարությանը ներկայացված ծրագրի նախնական առաջարկի

ժամանակացույցը որոշ վերանայումների է ենթարկվել. այս մասին ժամանակակից արվեստի վարչությունը նախապես տեղյակ է պահվել։

ԵԹԵ ՍԱՀՄԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՔԱՂԱՔԻՆ ՄՈՏԵՆԱԼ,

ԱՊԱ ՔԱՂԱՔԸ ԿԳՆԱ ԴԵՊԻ ՍԱՀՄԱՆ

«Դեպի Հավեսին սենյակների ցանց» ծրագրի հայեցակարգը նախատեսում էր խոցելի համայնքներում ստեղծարար հարթակներ բացելու և դրանք գործարկելու միջոցով կրթամշակութային հավասար հնարավորություններ առաջարկել հիմնականում հեռավոր սահմանամերձ գյուղերի (+ ներառական կրթություն իրականացնող համայնքների) դպրոցներին, մայրաքաղաքում կենտրոնացված մշակութային կապիտալն «արտահանել» համայնքներ, նպաստել մարզերում մշակութային, ստեղծագործական ներուժի հայտնաբերմանն ու ստեղծարար կարողությունների զարգացմանը, մշակութային կրթության մոդելի փորձագիտական հիմնավորման համար նյութեր ամբարել, հստակեցնել, վեր հանել խնդիրները, խորքային վերլուծություններ անել, մշակույթի նախարարության, ստեղծագործական միությունների, ստեղծարար խմբերի, հայտնի արվեստագետների ու մշակույթի գործիչների համագործակցությամբ և նրանց օժանդակությամբ այցեր կատարել մարզեր, հանդիպումներ, զրույցներ ու վարպետաց դասեր կազմակերպել Հավեսին սենյակների սաների հետ, ճաշակ զարգացնել՝ նպաստելով նոր մտածողություն կրող երիտասարդ մարդու, ազատ քաղաքացու ձևավորմանը։

«ԴԵՊԻ ՀԱՎԵՍԻՆ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՑԱՆՑ» ծրագրի խնդիրներն ու նպատակները

- հաղթահարել գյուղական երիտասարդության «անտեսվածության» ու մայրաքաղաքային հոգևոր կյանքից անմասն զգալու բարդույթը,
- կազմակերպել կենտրոն-սահման մշակութային կապը,
- մեղմել «էլիտար-մայրաքաղաքային» ու «պերիֆերիկ-անտեսված» հակասությունը,
- «մշակութային ներխուժումներ» կատարել հեռավոր համայնքներ՝ օգտագործելով ճանաչված արվեստագետների, գրողների, հայտնի հասարակական դեմքերի կամավոր ներուժը,
- կազմակերպել «Արվեստը՝ սահմանին» նախաձեռնող խմբի ճանաչված արվեստագետների առցանց դասընթացներ,
- կապ ստեղծել Երևանի դպրոցների աշակերտների/արվեստի բուհերի ուսանողների և Հավեսին սենյակների սաների միջև, կազմակերպել փոխայցեր, առցանց և առկա համատեղ դասեր, ցուցահանդեսներ, պլեներներ,
- յուրացնել սեփական ժողովրդի մշակույթը, ճանաչել ու հարգել այլ մշակույթներ,
- զարգացնել մայրաքաղաքի աշակերտների/ուսանողների հայրենաճանաչությունը,

նպաստել նրանց՝ հայրենիքը սահմանից սահման այցելելու, հասկանալու և որպես հանձնառու քաղաքացի ձևավորվելու գործին,
- խթանել հեռավոր գյուղերի երեխաների աշխարհճանաչողությունը,
- ցանցային կապ ստեղծել Հայաստանի տարբեր համայնքներում գործող Հավեսին սենյակների միջև,
- կապ ստեղծել արտերկրում գործող համանման երիտասարդական կազմակերպությունների հետ, ցանցի անդամ դարձնել նրանց,
- երեխաների պաշտպանության միջազգային օրը Երևանում կազմակերպել «Խաղաղությունը սկսվում է ժպիտից» ցուցահանդես, պարբերական դարձնել երեխաների աշխատանքների ցուցադրությունները,
- գիտելիք, ճաշակ, հարգանք, հանդուրժողականություն և ստեղծարար վերաբերմունք ձևավորել,
- նպաստել ազատ, քննական միտք ունեցող, սեփական մշակութային արժեքները ճանաչող ու պահպանող, այլոց մշակույթը ճանաչելու պատրաստ և այլատեսակության նկատմամբ հարգանք տածող սերնդի դաստիարակությանը:

Ծրագրի կողմերը

- «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամ (ծրագրի հեղինակ և կազմակերպիչ),
- ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ ծրագրի ֆինանսավորող,
- Հավեսին սենյակներ (5)՝ աշխարհագրությունը՝ Տավուշ, Գեղարքունիք, Վայոց Ձոր, Արարատ, Արմավիր,
- Երևանյան կրթօջախներ՝ «Արեգնազան», «Մխիթար Սեբաստացի» և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրներ, «Հերացի» ավագ դպրոց, «Ծիլ բուսաց» ներդաշնակ զարգացման կենտրոն, Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Իջևանի «Արևիկ» սոցիալ-կրթական կենտրոն,
- «Արվեստը՝ սահմանին» նախաձեռնող խումբ (հայտնի արվեստագետներ՝ գեղանկարիչներ Արմեն Խոջոյան, Անուշ Առաքելյան, Տիգրան Ասատրյան, Նանա Մինասյան, Հովնան Սարգսյան, անիմատորներ Նաիրա Մուրադյան, Սիսակ Ռաֆայելյան, քանդակագործներ Արեգ Պետրոսյան, Վիգեն Ավետիս, այլք):

Սահմանամերձ և հեռավոր գյուղերում մշակութային «ներխուժումներ» իրականացրած և հիմնադրամի ծրագրերին աջակցած անվանի մարդկանց շարքում են Տիգրան Մանսուրյանը, Հասմիկ Պապյանը, Ռուբեն Հախվերդյանը, Տիգրան Համասյանը, Մարիամ Պետրոսյանը, Նարինե Աբգարյանը, այլք.

https://www.youtube.com/watch?v=8v9ZLOd6ppA&feature=youtu.be

Գեղագիտությունը, քաղաքացիական ներգրավվածությունը

Հայաստանի մարզերի քարտեզով տարածվող այս հարթակները կետային բնույթ չունեն, նրանք «ճառագայթող կենտրոններ» են (բնորոշումը՝ Հասմիկ Պապյանի)։ Դրանք մտայնություն ձևավորող, ճաշակ զարգացնող, ինքնաճանաչողություն, վստահություն ու արժանապատվություն ներարկող լուսավոր տարածքներ են, որոնք ցանցային ընդլայնումով բարեփոխելու են այլ գյուղերի երիտասարդ բնակիչների կյանքն էլ, նրանց դարձնելու են իրենց երկրի հանձնառու ստեղծարար քաղաքացիները։ Ասվածի լավագույն ապացույցը հենց իրենց՝ Հավեսին սենյակի տերերի, կարծիքն է գյուղում սենյակի բացումից հետո տեղի ունեցած փոփոխությունների մասին.

https://www.youtube.com/watch?v=pOJ92FKJQV8

Հարկ է նշել, որ վերը բերված նպատակներից զատ՝ ծրագիրը խնդիր է դնում աշխատել նաև ներառական կրթություն ստացող երեխաների հետ։ Այդպիսի փորձառություն «Հայ Ձմեռ պապն» ունեցել է Արարատի մարզի Զորակ համայնքի դպրոցի և Արմավիրի թիվ 10 դպրոցի երեխաների հետ աշխատելիս.

https://www.youtube.com/watch?time_continue=3&v=-ZezqSVpScQ

https://www.youtube.com/watch?v=zdLq1IgtE24&t=23s

Կամավորները

Ծրագրի արդյունավետության կարևոր բաղադրիչներից մեկը, ի թիվս այլոց, կամավորության սկզբունքն է։ «Հայ Ձմեռ պապի» առաջարկի շուրջ արդեն իսկ ձևավորված կամավորական հուսալի «միջուկը» զարմանալի թափով զորեղանում է՝ նոր օղակներ ներգրավելով։ Հենց իրենք՝ վարպետաց դասեր վարող ճանաչված արվեստագետները, կամավորության հիանալի օրինակներ ներկայացնող անանձնական մարդիկ են։

5-րդ՝ Լուսակունք գյուղի Հավեսին սենյակի համաֆինանսավորողը և գործընկերը ՀՀ-ում Գերմանիայի Դաշնության դեսպանատունն է։ Նախատեսվում է սահմանամերձ Հավեսին սենյակները նաև միջմշակութային քաղաքակրթական մանկական կենտրոններ դարձնել, արդեն բանակցություններ են ընթանում Բեռլինի „Wir sind eins“ մանկական պատկերասրահի հետ (ղեկավար՝ Մարգարիտ Թադևոսյան)։ Կամավորական աշխատանքներ կատարած արտասահմանցի այլ նվիրյալների մասին՝ այցերի մասին շարադրանքում։

«Դեպի հավեսին սենյակների ցանց» ծրագրով նախատեսված 10 այցի ֆեյսբուքյան ազդ-իվենթների ցանկը

1. Հունիսի 26. Արմավիր. «Հավեսին մարդկանց ակումբ»
https://www.facebook.com/events/321993255380400/?active_tab=about

2. Հունիսի 27. Ջորակ. «Արվեստ, աշխատանք, ընկերություն»
https://www.facebook.com/events/477732773025020/?active_tab=about

3. Հուլիսի 20. Վազաշեն. «Բնանկարը արվեստում»
https://www.facebook.com/events/593171081091002/?active_tab=about

4. Օգոստոսի 14. Վազաշեն. «Հեքիաթերեն: Բնանկար: «Ջի՞նչ ցուցանէ առակս»: »
https://www.facebook.com/events/466893313894581/?active_tab=about

5. Օգոստոսի 20. Արմավիր. «Դարձիր անիմատոր»
https://www.facebook.com/events/935466290130303/?active_tab=about

6. Սեպտեմբերի 21. Խաչիկ. «Պահապան հրեշտակներ Արարատի հայացքի ներքո»
https://www.facebook.com/events/408455053145486/?active_tab=about

7. Նոյեմբերի 24. Խաչիկ. «Նկարի ստեղծման փոքրումեծ հնարքները»
https://www.facebook.com/events/528331061052025/?active_tab=about

8. Դեկտեմբերի 5. Ջորակ, Արմավիր. «Հավեսին սենյակների սաները՝ Արմավիր համայնքի փոքրիկներին»
https://www.facebook.com/events/782539488874331/?active_tab=about

9. Դեկտեմբերի 8. Լուսակունք. «Երևան-Լուսակունք. կենտրոն-սահման»
https://www.facebook.com/events/448381112370985/?active_tab=about

10. Հունվարի 30. Լուսակունք, «Վարպետաց դաս Լուսակունքի Հավեսին սենյակում»
https://www.facebook.com/events/202752350863995/?active_tab=about

ՖՈՏՈՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ















«Դեպի հավեսին սենյակների ցանց» ծրագրով նախատեսված այցերի նկարագրությունը ֆբ ալբոմների միջոցով (տեքստեր, լուսանկարներ, տեսանյութեր, արձագանքներ): Վարպետաց դասերը վարող բոլոր արվեստագետները/ մտավորականները ծրագրին մասնակցել են կամավորաբար և մեծագույն նվիրումով:

1. Արմավիր. 26.06.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2371891973082841

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՎԵՍԻՆ ՍԵՆՅԱԿԻ ՈՒՐԱԽ ՕՐԸ

Երկմաս դաս, որին մասնակցում էին Արմավիրի N 10 ներառական դպրոցի՝ Սևան Նազգաշյանի անվան Հավեսին սենյակի սաները և Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Վիգեն Ավետիսի քանդակի դպրոցի աշակերտներն իրենց ուսուցիչների հետ: Սեբաստացիների երաժշտական նվերը.
https://www.youtube.com/watch?v=zPVwyxeqBZE&t=13s
Վարպետաց դասը վարում էր Լոս-Անջելեսից ժամանած, Modest Fly Art ստուդիոյի հիմնադիր Իռեն Ծատուրյանը («Հավեսին սենյակների ցանց» ծրագրի մասին տեղեկությունները, տարածվելով արտասահմանում, հետաքրքրություն են առաջացրել մասնագետների շրջանում. տիկ. Իռեն Ծատուրյանն ինքն էր ցանկություն արտահայտել հայրենիք գալու և մարզերի երեխաների հետ աշխատելու: Նա նաև նկարչական մեծաքանակ պարագաներ նվիրեց սաներին):
Ծրագրի 2-րդ մասը նույնքան հետաքրքիր էր. սեբաստացիներն ու Արմավիրի հավեսին երեխաները լսեցին Հովհ. Թումանյանի «Խելոքն ու հիմարը», «Անխելք մարդը» հեքիաթները ճանաչված դերասան Ստեփան Շահինյանի ներկայացմամբ.
https://www.youtube.com/watch?v=kvwRKNGldls&t=7s

2. Զորակ. 27.06.2019.
https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2397725253832846

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տիկ. Ծատուրյանի վարպետաց դասը Զորակի՝ Անահիտ Ավետյանի անվան Հավեսին սենյակի սաների և Երևանի «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի աշակերտների հետ: Նպատակը՝ ստեղծել նկարներ, որոնք հետագայում կզարդարեն Նորքի մանկական հիվանդանոցի՝ հիմնադրամի գործընկեր FCN կազամկերպության նորոգած 2 բաժանմունքների պատերը: Այս այցը հետագայում նաև 2 օժանդակ ենթածրագրի առիթ դարձավ, որի մասն կխոսենք հաշվետվության շարադրանքի վերջում՝ «Ծրագիրը և կամավորության բարեգործական շղթան» բաժնում:

3. Վազաշեն. 20.07.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2361769914095047

«ՍԱՐԵՐ ԵՆ, ՁՈՐԵՐ ԵՆ, ԾԱՌԵՐ ԵՆ…՝ ԱՅՆՔԱ՛Ն ԳԵՂԵՑԻԿ…»

ա) գեղանկարիչ Արմեն Խոջոյանն այսպես սկսեց 20.07.2019.-ին Վազաշենի՝ Սևան Նազգաշյանի անվան Հավեսին սենյակի և Իջևանի «Արևիկ» սոցիալ-կրթական կենտրոնի սաների համար կազմակերպված վարպետաց դասը.

https://www.youtube.com/watch?v=_CEVLxOsojM&t=4s

բ) ծրագրի երկրորդ մասը արձակագիր-թարգմանիչ Վարդան Ֆերեշեթյանի զրույցն էր երեխաների հետ,

գ) Գերմանիայից ժամանած Լուսինե Զեյթունյանը ներկայացրեց սփյուռքի հայ գաղթօջախների կրթամշակութային մարտահրավերները, Հավեսին սենյակին նվիրեց Բեռլինի «Գիտելիք» հայկական դպրոցի ամանորյա հանդեսի բարեգործական հասույթով գնված նվերները։

4. Վազաշեն. 14.08.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2381391665466205

ՀԵՔԻԱԹԵՐԵՆ։ ԲՆԱՆԿԱՐ։ «ՋԻ՞ՆՉ ՑՈՒՑԱՆԷ ԱՌԱԿՍ»։

Եռամաս դաս.

ա. կանադաբնակ Նազգաշյան ընտանիքի այցը Սևան Նազգաշյանի անվան Հավեսին սենյակ։ Ընտանիքի ընկերներ Անի Ամսեյանը (սցենարիստ, տիկնիկային թատրոնի դերասան) և Հակոբ Մազլումյանը (կոմպոզիտոր) Վազաշենի ինտերակտիվ ներկայացում բեմադրեցին վազաշենցիների համար՝ փայլուն մեկնաբանությունը Թումանյանի երեք հեքիաթների, որ մեկ ամբողջական ներկայացում են կազմում՝ «Շունն ու կատուն», «Պոչատ աղվեսը», «Ճամփորդները»։ Երեխաները մեծ հաճույք ստացան՝ դառնալով ներկայացման համահեղինակները և մասնակիցները.

https://www.youtube.com/watch?v=LXE6ME7JS54&t=10s

բ. վազաշենցի հավեսին երեխաների և Իջևանի «Արևիկ» սոցիալ-կրթական կենտրոնի սաների հետ վարպետաց դաս անցկացրեց գեղանկարիչ Արմեն Խոջոյանը։ Նրան օգնեցին «Արվեստը՝ սահմանին» նախաձեռնության անդամները՝ գեղանկարիչներ Անուշ Առաքելյանը և Աննա Աղիյանը, անիմատոր Նաիրա Մուրադյանը։

գ. գրող, թարգմանիչ Վարդան Ֆերեշեթյանը երեխաների հետ աշխատեց՝ վերլուծելով Այգեկցու և Գոշի առակները.

https://www.youtube.com/watch?v=tl8dLzS7z54

5. Արմավիր. 20.08.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2382763991995639

ԴԱՐՁԻՐ ԱՆԻՄԱՏՈՐ

ա) Նաիրա Մուրադյանի վարպետաց դասի ընթացքում Արմավիրի Հավեսին սենյակի սաները և նրանց այցի եկած՝ ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի աշակերտներն առաջին քայլերն արեցին անիմացիայի բնագավառում: Ստոպ-մոշըն: Արդյունքը՝ համատեղ ջանքով ստեղծված «Հավեսին սենյակ» ստոպ-մոշըն անիմացիան.

https://www.youtube.com/watch?v=KHjeDyEzKYA&feature=youtu.be

բ) «Հեքիաթերեն»: Անի Ամսեյանի և Հակոբ Մազլումյանի թատերական բեմադրությունը.

https://www.youtube.com/watch?v=BjQhZ91N0Nc&t=3s

Այցի հետևանքով դպրոցի գրադարանը հարստացավ արժեքավոր գրքերով.

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1402085623278315&id=100004306728556&hc_location=ufi&comment_id=Y29tbWVudDoyMzgyNzc0MTcxOTk0NjIxXzIzODUxODA4NDg0MjA2MjA%3D

6. Խաչիկ. 21.09.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2412550989016939

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ + ԳԱԹԱՖԵՍՏ + ԱՐԱՐՈՒՄՆ ՀՐԵՇՏԱԿԱՑ

Անկախության տոնը որոշվեց միասին նշել սահմանամերձ Խաչիկ գյուղում՝ «Ծիլ բուսաց» ներդաշնակ զարգացման կենտրոնի և Հավեսին սենյակի սաների հետ միասին: Անիմատոր Նաիրա Մուրադյանը գրաֆիտիի դասն այնպես կազմակերպեց, որ երեխաներն իրենց ձեռքերով գեղեցկացնեն սեփական համայնքը՝ միաժամանակ յուրացնելով գրաֆիտիի արվեստի հմտությունները. Խաչիկ գյուղի ծանրամարտի խմբակի հին շինության պատին արարված պահապան հրեշտակիկներն ավելացրել են գյուղի գրավչությունը, դարձել զբոսաշրջիկներին ձգող տեսարժան վայր:

7. Խաչիկ. 24.11.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2464837060454998

ՆԿԱՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՔՐՈՒՄԵԾ ՀՆԱՐՔՆԵՐԸ

ա) գեղանկարիչ Անուշ Առաքելյանի վարպետաց դասը Խաչիկի հավեսին երեխաների և «Ծիլ բուսացի» սաների հետ.

https://www.youtube.com/watch?v=gvQXe5D58S4&feature=youtu.be

բ) «Ծիլ բուսաց» ներդաշնակ զարգացման կենտրոնի տնօրեն Արմենուհի Մարտիրոսյանի զրույցը երեխաների հետ. գաղափար մշակութային այլընտրանքային ուսուցման մեթոդի մասին.

https://www.youtube.com/watch?v=OXShKSCvE8o&feature=youtu.be

գ) «Ինտերնետ հանրության Հայաստան հատված» հկ-ի (ISOC) մասնագետի միջոցով կազմակերպության տրամադրած համակարգիչների ու ռաուտերի տեղադրումը առցանց հաղորդակցություն հաստատելու նպատակով.

https://youtu.be/wOCqWquV2OQ

(ISOC-ի շնորհիվ բարելավվել է ինտերնետ հաղորդակցությունը նաև Վազաշենում.

https://www.youtube.com/watch?v=ZPZ4IQeTgd8):

8. Ջորակ. 05.12.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2477480245857346

ՀԱՎԵՍԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ՝ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՍԱՆԵՐԻՆ

Արտագնա դաս Արմավիր համայնքի մանկապարտեզի շենքում: Ջորակի և Արմավիրի հավեսին սենյակների ուսուցիչներն իրենց սաների հմտություններն են զարգացնում որմնանկարի արվեստի բնագավառում և դրանով հանրօգուտ ներդրում կատարում համայնքի մանկապարտեզի շենքի ներքին ձևավորման գործում.

https://www.facebook.com/nelly.iritsyan.5/videos/1393849944130429/?hc_location=ufi&comment_id=Y29tbWVudDoyNDgyNzAyODg4NjY4NDE1XzI0ODI3NTQ1Mjg2NjMyNTE%3D

9. Լուսակունք. 08.12.2019.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2475357919402912

ԼՈՒՍԱԿՈՒՆՔԻ ՀԱՎԵՍԻՆ ՍԵՆՅԱԿԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԴԱՍԸ

Երևանի ամենամեծ՝ Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոցի սաների և ուսուցիչների այցը: Վարպետաց դաս, ինտերնետ կապի հաստատում, հետագա քայլերի քննարկում և պայմանավորվածություն համագործակցության ձևաչափի մասին.

https://www.youtube.com/watch?v=oWMqTzNiuSg&feature=youtu.be

10. 30.01.2020. Լուսակունք

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2528290600776310

Արվեստագետների, Երևանի «Արեգնազան» կրթահամալիրի սաների և Հայաստանում ԳԴ-ի դեսպանության մշակութային եւ տնտեսական համագործակցության հարցերով կցորդ Յակոբ Յիգլերի այցը Լուսակունքի Հավեսին սենյակ:

ա) Արմեն Խոջոյանի ու Աննա Աղիյանի վարպետաց դասը Լուսակունքի հավեսին երեխաների և Երևանի «Արեգնազան» կրթահամալիրի սաների հետ.

https://www.youtube.com/watch?v=z66NYNAVei8&t=12s

բ) Արեգնազանցիների նվերը լուսակունքցիներին՝ հատվածներ «Ֆաուստի»՝ իրենց բեմադրած գերմաներեն ներկայացումից (երկու դպրոցների աշակերտների ուսումնասիրած լեզուն էլ գերմաներենն է).

https://www.youtube.com/watch?v=9rcrSAbOWmY&feature=youtu.be

(Այցի մասին տես նաև Երևանում Գերմանիայի դեսպանության կայքում.

https://www.facebook.com/deutschebotschafteriwan/posts/2497451763804029):

. . . . . .

Հավեսին ստուգատես

Դրամաշնորհի դիմելիս «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամը նախատեսում էր Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Երևանի ցուցասրահներից մեկում կազմակերպել Հավեսին սենյակների սաների աշխատանքների ցուցահանդեսը: ԳԿՄՍ նախարարության ֆինանսավորման հապաղելու պատճառով ցուցահանդեսի ֆինանսական բեռը «Հայ Ձմեռ պապն» իր վրա ստանձնեց, բայց բովանդակային հաշվետվության շարադրանքում ավելորդ չենք համարում ներկայացնել մարզերի երեխաների «մշակութային ներխուժումը» Երևան:

Ստորև՝ հունիսի 1-ին Հավեսին սենյակների սաների երկօրյա այցը Երևան, «Սարգիս Մուրադյան» պատկերասրահում երեխաների ստեղծագործությունների ցուցադրությունը, մայրաքաղաքի մշակութային օջախներ և տեսարժան վայրեր կատարած էքսկուրսիաները, վազաշենցի երեխաների գիշերակացը արեգնազանցիների ընտանիքներում, բոլոր այս միջոցառումներին բարեկամ-կազմակերպությունների ընդգրկվածությունն ու մասնակցությունը ներկայացնող նյութը.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2334601163478589

Ծրագիրը և կամավորության բարեգործական շղթան

«Դեպի Հավեսին սենյակների ցանց» ծրագրի իրականացման ժամանակ հետաքրքրական «կողմնակի էֆեկտներ» առաջացան:

Ծրագրի ընթացքի 8 ամիսները Հայաստանի և սփյուռքի արվեստագետներին ու մտավորականներին համախմբեցին մայրաքաղաքային մշակույթը ապակենտրոնացնելու, այն մարզեր տանելու, մշակութային հավասար հնարավորություններ ստեղծելու գաղափարիների շուրջ: Ծրագիրը ենթածրագրեր ծնեց, որոնց մասնակիցները ոչ միայն մեծերն են, այլև հենց իրենք՝ Հավեսին սենյակների սաները:

Այսպես, օրինակ, Հայաստանի մարզերը ներսից տեսնելու, գյուղերի պայծառ երեխաներին անձամբ ճանաչելու, նրանց հետ աշխատելու հետևանքով լոսանջելեսյան Modest Fly Art ստուդիոյի հիմնադիր Իռեն Ծատուրյանը որոշել է այս տարի դարձյալ այցելել Հայաստան և աշխատել սենյակների սաների հետ:

Ջորակի և Արմավիրի երեխաների հետ նրա անցկացրած վարպետաց դասերի արդյունքում ստեղծված նկարներն այժմ զարդարում են «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի 1-ին և 2-րդ բաժինների պատերը: Սիրով նկարած, ջերմ ու գույնզգույն այս նկարները, կարծում ենք, կարագացնեն հիվանդ երեխաների ապաքինումը.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2396733110598727

Վերջերս տիկ. Ծատուրյանի միջոցներով Ջորակի Հավեսին սենյակում օդորակիչ է տեղադրվել. երեխաները ոգևորված են, քանի որ Հավեսին սենյակում ամռանը շոգ, ձմռանը ցուրտ չի լինի այլևս.

https://www.facebook.com/pg/haysanta01/photos/?tab=album&album_id=2545326595739377

Երեխաները ոչ միայն արվեստ են ուսումնասիրում ու սովորում, այլև քաղաքացիական դաստիարակություն դպրոց են են անցնում այս սենյակներում: «Ոչ միայն ստանալ, այլև տալ» սկզբունքով նրանք մասնակցում են համայնքային հանրօգուտ կյանքին: Մեր հավեսին սաներն իրենց հմտությունները կիրառում են նաև ի նպաստ այլ գյուղերի, ավելի գրավիչ ու ինքնատիպ դարձնում համայնքային նշանակության հաստատությունները (տե՛ս 6-րդ և 8-րդ այցերի նկարագրությունը, պատկերաշարը՝ վերջին էջում):

Ծրագիրը շարունակելու անհրաժեշտությունը

ՀՀ ԳԿՄՍ նախարարության դրամաշնորհով իրականացված «Դեպի Հավեսին սենյակների ցանց» ծրագրի վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ կատարված աշխատանքը շարունակելու, գյուղական մշակութային կենտրոնների ցանցն ընդարձակելու և ծրագիրն իբրև մարզերում մշակութային կրթության այլընտրանքային ուղի փորձագիտական մակարդակով հիմնավորելու անհրաժեշտություն կա:

«Հայ Ձմեռ պապը» վստահության համար շնորհակալություն է հայտնում նախարարությանը և արտահայտում է իր հաստատակամությունը՝ շարունակելու սկսած աշխատանքը: Այս նպատակով հիմնադրամը հայցում է նախարարության օժանդակությունը:

ՀԱՎԵՍԻՆ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՆՎԵՐՆԵՐԸ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ



Արմենուհի Պետրոսյան

«Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն